

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱՉԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (11 Ապրիլ 1993 թ.)

Ցանում Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն։

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Սիրելիներ Մեր,

Ամէն տարի գարնան, երբ ողջ բնութիւնը մեր աշխարհի, ապրում է զարթօնքը և ծաղկումը կեանքի ուժերի, մեր Սուրբ Եկեղեցին ու մեր հաւատաւոր ժողովուրդը, տօնախմբում են և փառաբանում Աստուածորդու՝ Յիսուսի Քրիստոսի յարութեան հրաշքը, որ «մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբ իւրով մեզ զկեանս պարգևեաց»։

Յիսուսի հրաշալի յարութեան աւետիսը մեծագոյն պարգևն է մարդկութեան ընծայուած, իբրև սկզբնաւորում և երաշխիք ճնչեցեալների յարութեան ու հոգիների անմահութեան։ Սա է քրիստոնէական մեծ յոյսը, որ նաև մեր առաքելական Մայր Եկեղեցին իր աղօթքներով ու խորհրդակատարումներով բաշխում է մեր ժողովրդի զաւակներին ահա հազար ու եօթը հարիւր տարիներ շարունակ։

Ի՜նչ սքանչելի աւետիս, ի՜նչ անանց ուրախութիւն, ի՜նչ փրկարար յաղթութիւն ընդդէմ մահուան։ Ինչ լաւ է, որ մենք, հայերս, քրիստոնեայ ազգ ենք։

Այո՛, մեր մարդկային ժամանակաւորութիւնից այն կողմ, Յիսուսի Յարութեան խորհուրդը մնում է անմնան երաշխիքը նաև մեր՝ մահկանացուներիս յարութեան, կամրջելով երկրային կեանքը գերեզմանից այն կողմ, դէպի յաւիտենական կեանք։

Սուրբ Զատիկի տօնախմբումը ամէն տարի, մի սքանչելի առիթ է բոլորիս համար, խորհրդածելու մեր ապրած կեանքի իմաստի ու նպատակի մասին, խորհրդածելու մեր ազատագրման մասին մեղքի և չարիքի կապանքներից, խորհրդածելու մեր հոգիների գոյատևման մասին մահուանից յետոյ և երազելու՝ ժառանգումը յաւերժական կեանքի, մի լուսաւոր հեռու աշխարհում։

Սուրբ Յովհաննէս աւետարանիչ վկայում է «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի Որ զբանս իմ լսէ և հաւատայ այնմ, որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս. և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս»: (Յովհ. 5. 24), իսկ Պօղոս առաքեալ թէ «Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց» (Ա. Կորնթ. ԺԵ. 20):

Մահը դառնում է ճախնիզանքը յաւիտենական կեանքի:

Յիսուսի յարութեան աւետիսով, մենք բոլորս ոգեշնչւում ենք, խաչափայտի վրայ նրա զոհաբերութեան խորհուրդով և նրա յաղթութեամբ ընդդէմ մահու: Ոգեշնչւում ենք նաև նրա կենարար պատգամներով, որոնք մեր առաջ բացում են փրկարար ճանապարհը՝ ծառայելու բարի և արդար գործերի կենսագործմանը երկրային մեր կեանքում:

Յիսուսի պատգամները ազնուացնում են մեր մարդկային մտորումները և արարքները, իմաստ և բարոյական արժէք են տալիս մեր ձեռաց գործերին, ջերմացնում են մեր սրտերը, աճեցնում են մեր ուժերը՝ ի կատար ածելու համար մեր կեանքում այն ինչ բարի է, այն ինչ արդար է, այն ինչ մարդասէր է և խաղաղարար:

Սոնա խոնարհներ, սոնա տեսչաքներ որոնցով առաջնորդում են և պայքարում՝ իրաւ քրիստոնեայ մարդիկ, իրականացնելու համար դրանք իրենց սրտաստական և ընկերային և ազգային կեանքում:

Յիշենք մի հին իմաստութիւն, որ այժմէական է միշտ մարդկային աշխարհում՝

«այն ժամանակ երբ արդարութիւնը ոտնակոխ է լինում, այլևս ոչինչ չի մնում, որ արժանորի մարդկային կեանքում»:

Հաւատաւոր հարազատ ժողովուրդ մեր, որ ի Հայաստան, որ յԱրցախ և որ ի սփիւռս աշխարհի, զատկական այս յուսաշող պահին, սուրբ պահենք աւետարանական այս պատգամները, դառնալու համար արժանի մեր Տիրոջ Յիսուսի հրաշալի յարութեան շնորհներին, մանաւանդ այս օրերին, երբ մեր ողջ ժողովուրդը հերոսական մարտ է մղում ընդդէմ մահուան, ընդդէմ անիրաւութեան և ընդդէմ մեղապարտ ուժերի:

Այո՛ մեր հոգիները, մեր գիտակցութիւնը վկայում են, թէ Արցախի մեր եղբայրների և քոյրերի մարտը յանուն ազատութեան և արդարութեան, մահուամբ մահը յաղթելու և նոր կեանքի լուսաբացը նուաճելու մի սխրանք է աստուածատուր:

Մեր աղօթքները նրանց հետ են և յուսով ենք, որ Աստուծոյ ողորմութեամբ մօտ ապագային կը յաղթանակի արդար դատաստանը ու վերջ կը գտնեն մեր ժողովուրդի տառապանքները, վերահաստատումով մեր հայրենիքի անվտանգութեան և բարօրութեան և խաղաղութեան:

Թող բարին Աստուած, դատաւորը բարեգութ ու անոխակալ, օգնութեան հասնի մեր տառապեալ ազգին:

Իսկ այս լուսաշող պահին, մաղթում ենք սրտանց՝ մեր հայրենիքի պետութեան ղեկավարներին ու բոլոր հասարակական գործիչներին և ողջ մեր ժողովուրդին՝ եղբայրական փոխադարձ սէր և միասնական հայրենաշէն ոգի, վերստին բոլորին յիշեցնելով մեր մայր եկեղեցու մշտական աղերսը՝

«Միութիւն ի կարնորս
Ազատութիւն յերկրայնականս
Սէր յընդհանուրս»:

Այս նրագաթներով ու ապաստաններով Մեզք դիմաւորում ենք այս տարի Սուրբ Զատիկը և բոլոր մեր ճոգևոր զաւակներին բաշխում մեր օրհնութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից։

Սէր և խաղաղութիւն յարուցեալ Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսին ամէն։